

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՔԱՆԻ ՄԸ ԱՆՏԻՊ ԴՐԱՄՆԵՐԸ

ԵՂԻԱ ՆԵՐՍՆՍԵԱՆ

Զարեհ Պտուկեանի Արտաշեսեան Հարստութեան Դրամները<sup>1</sup> եւ մեր Armenian Coins And Their Values<sup>2</sup> գիրքերուն հրատարակուելէն ի վեր յայտնարեւուած են Արտաշեսեան Հարստութեան դրամներուն վերաբերող նորութիւններ, որոնք ուշադրութեան արժանի են:

Հակառակ անոր որ Արտաշեսեան Հարստութեան արքաներուն վերադրուած այս չհարապարակուած դրամները մեծապէս ընդարձակեցին մեր գիտելիքները Հայ դրամագիտութեան ընդառաջին մէջ, սակայն, առկայ եւ մեզի ծանօթ դրամները տակաւին չառ հեռու են ամբողջական դրամագիտական համակարգ մը ընծայելէ Արտաշեսեան Հարստութեան բոլոր արքաներուն համար:

Ընդհանուր առմամբ, նորայայտ այս դրամները աւելցուցին նոր տեսակներ կամ այլ՝ դրամներու տարբերակներ, տրուած՝ զանազան գահակալներուն: Ունինք բազմաթիւ նորայայտ դրամներ, վերագրուած՝ Արտաշեսեան Հարստութեան արքաներուն մեծամասնութեան: Տակաւին, սակայն, գտնուած չեն դրամներ, որոնք պատկանին Արտաւազդ Ա.ին (160-123 Ք.Ա.) եւ Արտաշէս Ա.ին (190-160 Ք.Ա.), թէեւ ըստ Ե. դարու Հայ պատմագիր Մովսէս Խորենացիին, վերջինս եւ Արտաշէսեան Հարստութեան հիմնադիրը, դրամ կտրած են իրենց դիմանկարով<sup>3</sup>:

Միւս կողմէն, նորայայտ դրամներէն ոմանք ստեղծած են վիճելի կացութիւն մը՝ իրենց վերագրումին պատճառով: Սակայն պատմութիւնը պիտի տայ իր վերջնական վճիռը եւ լուծէ դրամագիտական մանր անհամաձայնութիւնները (օրինակ, դրամներուն վերագրումը՝ Տիգրան Ա., Բ., կամ Գ.ին, Արտաշէս Բ., կամ Գ.ին եւն.)<sup>4</sup>: Մեծապէս յուսալի է որ չհարապարակուած եւ յայտնարեւուելիք դրամներու լոյսընծայումը նոր լոյս սփռէ այս վիճելի հարցերուն վերաբերեալ ու նաեւ համարէ Արտաշէսեան Հարստութեան դրամական համակարգը (մանաւանդ՝ Արտաշէս Ա.ի եւ Արտաւազդ Ա.ի):

Այս հաղորդումով կը ներկայացուին 13 դրամներ, որոնցմէ 3ը արծաթեայ չորեքդրամեաններ (Թիւ 1, Թիւ 2 եւ Տառ Ա.), 2ը՝ արծաթեայ փոքրածաւալ դրամեաններ (Թիւ 3, Թիւ 4), եւ պղնձեայ չորս քաղկոս, քառաձի մարտակառք (Տառ Բ.), 2ը՝ պղնձեայ չորս քաղկոս, մօրուսաւոր Վահագն (Թիւ 5, Տառ Գ.), 1ը՝ պղնձեայ երկու քաղկոս, կրկնանշուած (Թիւ 6), 1ը՝ պղնձեայ երկու քաղկոս, չորս ատամներով խոյր եւ կրկնանշուած (Թիւ 7), 1ը՝ պղնձեայ չորս քաղ-

կոս, կտրուած դրամ (Թիւ 8) եւ 2ր՝ պղնձեայ մէկ քաղկոս, յաղթանակը բռնած (Թիւ 9 եւ Տառ Դ):

Այստեղ ներկայացուած բոլոր դրամները կը պատկանին Տիգրան Մեծին (95-56 Ք.Ա.), որ իշխեց շուրջ քառասուն տարի՝ լայնատարած հողամասի մը վրայ: Իր գահակալութեան շրջանին Հայաստան ունեցաւ անգերագանցելի հարստութիւն եւ ստեղծեց աշխարհակալութիւն: Ուրեմն զարմանալի չէ որ նորայայտ դրամներուն մեծամասնութիւնը իրեն պատկանի:

### ԱՐՄԱԹԵԱՅ ՉՈՐԵՔԴԵՐԱՄԵԱՆՆԵՐ (ԹԻԻ 1, 2 ԵՒ ՏԱՌ Ա.)

#### Ընդհանրութիւններ

Ասոնք ունին պատկերատիպային հիմնական նմանութիւններ եւ որոշ տարբերութիւններ:

Դրամներուն երեսի դիմանկարները, խոյրերը, արծիւներն ու աստղերը, ականջակայներն ու վզկայները իրարու նման են: Թիւ 1ի եւ 2ի հանգուցաւոր շրջափակներու երիզները աւելի փոքր են քան թէ Տառ Ա.ինը:

Դրամին ետեւի Բախտը, Որոնդէս գետի աստուածութիւնը մարմնացնող մերկ երիտասարդ լուդորդը եւ խորագրութիւնները հիմնականին մէջ նոյնն են երեք դրամներու պարագային: Թիւ 1 եւ 2 դրամներուն վրայ, Անտիոքի Բախտի գլխուն ետին, զրոշմուած՝  $\Phi$  տառը  $\vee$  տառին վերեւ, միատեղ, խարխիսի մը նմանութիւնն ունի: Տառ Ա. դրամին վրայ, Բախտի գլխուն ետին կայ վեցթեւանի աստղ մը (\*). Δ, Μ, Η տառերը նոյնն են երեք դրամներուն համար: Երիզակերպ հանգուցաւոր շրջափակները տարբեր են երեք չորեքդրամաններուն համար: Չափագիտական տուեալները ունին շատ փոքր տարբերութիւններ՝ 15.78 եւ 15.10 գրամ, 30 եւ 29 մմ տրամագիծ, ժամը 12 եւ 11 առանցքային ուղղութիւն:

Երեք դրամներու երեսներն ու կռնակները հատանուած են տարբեր կաղապարներով՝ սակայն բազմաթիւ նմանութիւններու պատճառով դասաւորուած են արծաթեայ դրամներու նոյն խումբին մէջ:

#### Նկարագրութիւն

Երես- Տիգրան Մեծի կիսանդրին գեղեցկադէմ դիմանկարով դէպի աջ, մաքուր ածիրուած եւ գլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով հայկական խոյրը: Արքայական լայն ժապաւէնը կը շրջապատէ խոյրը՝ հանգուցուած է գլխուն ետին եւ ծայրերը ազատ, ուսն ի վար կ'իջնեն: Խոյրի ներքեւ միացած են ականջակայն ու վզկալը: Խոյրը զարդարուած է ութթեւանի աստղով՝ կողքերուն մէկական արծիւ, որոնք իրարու կը նային: Երիզակերպ հանգուցաւոր շրջափակ:

Կռնակ- Անտիոք քաղաքին Բախտը, աշտարակածեւ թագը գլխուն, քողարկուած, ժայռի մը վրայ նստած, աջ ձեռքով արմաւենիի ճիւղ մը բռնած, ոտքերուն տակ՝ Որոնդէս գետի աստուածութիւնը մարմնացնող երիտասարդ մը կը լողայ դէպի աջ, Յունաստա խորագրութիւնը աջին դէպի վար՝ ΒΑΣΙΛΕΥΣ, ձախին դէպի վար՝ ΤΙΓΡΑΝΟΥ: Բախտի ետին,  $\Phi$  տառը  $\vee$  տառին

վերեւ (խարխսխի նմանոց), Δ, Μ. իսկ աջ դաշտին մէջ, արձաւենիի ճիւղի աջին՝  
H: Դափննպսակ շրջափակ:

Թիւ 1. 15.78գ - 30մմֆ-12ժ

Թիւ 2. 15.10գ - 29մմֆ-11ժ<sup>5</sup>

Տառ Ա. 14.39գ - 30մմֆ-11ժ (Բախտի ձախին\* Δ, Μ).<sup>6</sup>

### ԱՐՄԱԹԵԱՏ ՓՈՔՐԱՄԱՒԱԼ ԴՐԱՄԵՆՐ (ԹԻԻ 3, 4, Տառ Բ.)

#### Ընդհանրութիւններ

Տիգրանի այս փոքր արծաթ դրամները, որոնց ետին դրուագուած է քառաձի մարտակառք մը, մեզի կը յիշեցնեն նոյն պատկերատիպով իր պղնձեայ քաղկուր: Հետաքրքրական է, որ նման դրամ մը պահպանուած է Վիեննայի Մխիթարեան Թանգարանի հաւաքածոյին մէջ, թէեւ պատշաճօրէն չէ նկարագրուած, որովհետեւ զարնուելու ընթացքին դրամի կաղապարին մէկ մասին մետաղէն դուրս մնալով ամբողջականօրէն կոխուած չէ: Նորայայտ դրամին վրայ մարտակառքին անիւր շատ յտակ է, սակայն Մխիթարեան օրինակին վրայ կիսովին զարնուած է, եւ անշուշտ, խորագրութիւնները կամ մետաղածոյէն դուրս մնացած են կամ ալ մաշած:

Տառ Բ., պղնձեայ դրամը քառաձի մարտակառքի պատկերատիպով, ամէն կերպով նման է Թիւ 3 դրամին, այն տարբերութեամբ որ արծաթին վրայ նշմարելի է երկու ձի, մինչ պղինձին վրայ՝ չորս: Հաւանական է, որ արծաթները կոխուած ըլլան պղինձներուն կաղապարներով եւ փոքրածաւալ հատածոյերէն դուրս մնացած են ձիերէն երկուքը (պղինձը 20 մմ տրամագիծ ունի, արծաթը՝ 14): Ուշադիր քննութիւն մը յայտնեցեւ կ'ընէ, որ Թիւ 3 եւ տառ Բ. դրամները ցոյց կու տան ձիերու չորս ետեւի ոտքերը: Դրոշմուած նոյն պատկերատիպը կը նշմարուի Աշմոյին Թանգարանի<sup>7</sup> պղնձեայ օրինակին վրայ ինչպէս նաեւ 1982ին վաճառուած ալլ պղինձի<sup>8</sup> մը վրայ: Բացի այդ, Թիւ 3 դրամին վրայ, աջէն երկրորդ ձիու ձախին կը նշմարուի անձանօթ առարկայ մը:

#### Նկարագրութիւն

Երես- Տիգրանի խոշոր գլուխը դէպի աջ, մաքուր ամբողջուած եւ գլխուն՝ հինգ ժանիքներով հայկական խոյրը: Արքայական յայն ժպտաւէնը կը շրջապատէ խոյրը, հանգուցուած է գլխուն ետին եւ ծայրերը ուսն ի վար կ'իջնեն: Թագի ներքեւ միացած են ականջակալն ու վզկալը: Ոտքը զարդարուած է ութթեւանի աստղով՝ կողքերուն մէկական արծիւ, որոնք իրարու կը նային:

Կռնակ. Թագաւորը կը վարէ դէպի ձախ արչաւող քառաձի մարտակառք մը: Ինք սանձը կը բռնէ ձախ ձեռքով: Վերի յունատառ հաւանական խորագրութիւնը դէպի աջ՝ [BA]CIA[EΩC], վարը դէպի աջ՝ [BA]CIAEΩN / [TI]ΓΡΑΝΟΥ:

Թիւ 3. 2.10գ - 14մմֆ-12ժ

Թիւ 4. 3.51գ<sup>9</sup>

**ՊՂԻՆՁ, ՉՈՐՄ ՔԱՂԿՈՍ, ՔԱՌԱՁԻ ՄԱՏՐԱԿԱՆՔ (ՏԱՌ Բ.)**

Նկարագրութիւն

Երես. Թիւ 3ի նման: Կէտաւոր շրջափակ:

Կռնակ. Թագաւորը կը վարէ ղէպի ձախ արշաւող քառածի մարտականք մը: Ինք սանձը կը բռնէ ձախ ձեռքով եւ անորոշ առարկայ մը՝ աջ ձեռքով: Վերի յունատառ խորագրութիւնը ղէպի աջ՝ ΒΑCΙΑΕΩC, վարը ղէպի աջ՝ ΒΑCΙΑΕΩΝ / ΤΙΓΡΑΝΟΥ:

Տառ Բ. 6.86գ - 20մմΦ-2ժ.<sup>10</sup>

**ՊՂԻՆՁ, ՉՈՐՄ ՔԱՂԿՈՍ, ՄՕՐՈՒՍԱՒՈՐ ՎԱՀԱԳՆ (ԹԻԻ 5, ՏԱՌ Գ.)**

Ընդհանրութիւններ

Թիւ 5 զրամը Տիգրանի պղնձեայ զրամներէն մէկն է Վահագնի (Heracles) պատկերատիպով: Այս զրամին յատկանշական կէտը թագաւորին երեսին չածիլուած ըլլալն է: Իր թեթեւ մօրուքը կարելի է նշմարել խոշորացոյցով՝ զրամի իսկական մեծութեամբ նկարին վրայ, կամ ալ առանց խոշորացոյցի՝ երեք անգամ մեծցուած նկարին վրայ: Յետին դաշտին մէջ տառեր չկան: Պէտք է շեշտել որ այս լաւ մը մեծցած մօրուք մը չէ, այլ՝ շատ կարճ մօրուք մը, որ չէ ածիլուած քանի մը օրէ կամ շարաթէ մը ի վեր: Յարկ Տիգրան Մեծի նշմարուած բոլոր զրամներուն վրայ իր քանդակուած դիմանկարը մաքուր ածիլուած է ըստ տիրապետող յունական զրամահատութեան աւանդութեան:

Տառ Գ. զրամը սովորական պղինձ մըն է Վահագնի պատկերատիպով, բայց երեսը մաքուր ածիլուած է, ինչպէս նաեւ Դ զրոշմուած է ձախ դաշտին մէջ, եւ Ա տառը՝ աջ դաշտին մէջ: Տառ Գ. զրամին նկարը հոս ներկայացուած է պարզապէս համեմատութեան համար:

Նկարագրութիւն

Երես. Տիգրան Մեծի կիսանդրին ղէպի աջ, զլիտուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով հալկական խոյրը: Երեսը չէ ածիլուած ու թեթեւօրէն մօրուաւոր է: Արքայական ժապաւէնը հանգուցուած է զլիտուն ետեւ եւ ծայրերը վար կ'իջնեն: Խոյրին ներքեւ միացած են ականջակալն ու վզկալը: Խոյրը զարդարուած է ութթեւանի աստղով՝ կողքերուն մէկական արծիւ, որոնք իրարու կը նային: Կէտաւոր շրջափակ:

Կռնակ. մօրուաւոր մերկամարմին Վահագնը կանգնած, ձախ կը հայի: Աջ բազուկին վրայ կայ առիւծի մորթ, իսկ ձախ բազուկով կը յենի լախտի մը վրայ: Յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑCΙΑΕΩC, ձախին՝

ΒΑCΙΑΕΩΝ / ΤΙΓΡΑΝΟΥ: Կէտաւոր շրջափակ:

Թիւ 5. 4.63գ - 20մմΦ-12ժ

Տառ Գ. 5.77գ - 17մմΦ-17ժ, Դ տառը ձախին, Ա տառը աջին (մաքուր ածիլուած)



Ընդհանրութիւններ

Թիւ 6 դրամը Տիգրանի պղնձեայ դրամներէն մէկն է Վահագնի (Heracles) պատկերատիպով: Այս դրամին վրայի յատկանշական կէտը թագաւորին գլխուն ետեւի կրկնանշանն (countermark) է: Նշանը կը պարունակէ չորս շրջանակներ, որոնց իւրաքանչիւրին մէջ կայ փոքր կէտ մը կամ այ յունարէն չորս Ծ տառեր: Չորսը միատեղ կը կազմեն քառանկիւն մը: Դրոշմին մէջ կայ նաեւ արծիւ մը, որուն աջ թեւը կը համընկնի ձախի կէտին շրջանակին հետ: Դրամին ետեւի Վահագնի պատկերատիպը շատ վատ վիճակի մէջ է եւ որեւէ նշմարելի տառեր չկան դաշտին մէջ:

Ներկայիս չենք կրնար որեւէ բացատրութիւն տալ այս կրկնանշանին իմաստին համար: Հաւանական է որ արծիւն ու չորս շրջանակները եղած ըլլան երկու տարրեր կրկնանշաններ. թերեւս արծիւը զարնուած է շրջանակին վրայ: Կրկնանշաններու բացատրութիւններու մասին գրուած են մի քանի աշխատութիւններ<sup>11</sup> եւ գոյութիւն ունին բազմաթիւ ձեւեր արծուի կրկնանշաններու, սակայն որեւէ մէկը մեր հոս ներկայացուածին չի նմանիր: Միայն մեր արծիւը կը նմանի Howgegori թիւ 320, 321 եւ 325 կրկնանշաններուն<sup>12</sup>:

Նկարագրութիւն

Երես. Տիգրանի կիսանդրին դէպի աջ, մաքուր ածիրուած եւ գլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով հալկական խոյրը: Արքայական ժապաւէնը հանգուցուած է գլխուն ետեւ եւ ծայրերը վար կ'իջնեն նման թիւ 5ին: Սակայն թագաւորի խոյրի ետին առկայ է կրկնանշան մը, կը պարունակէ արծիւ մը եւ չորս շրջանակներ, որոնց իւրաքանչիւրին մէջ կայ փոքր կէտ մը: արծիւին աջ թեւը կը համընկնի վերի ձախի կէտին շրջանակին հետ:

Կռնակ. Թիւ 5ի նման:

Թիւ 6. 3.51գ - 10մմֆ-1ժ.

ՊՂԻՆՁ, ԵՐԿՈՒ ՔԱՂԿՈՍ, ՉՈՐՍ ԱՏԱՄԼԵՐՈՎ ԽՈՅՐ ԵՒ ԿՐԿՆԱՆՇՈՒԱՄ (ԹԻՒ 7)

Ընդհանրութիւններ

Թիւ 7 դրամը Տիգրանի պղնձեայ դրամներէն մէկն է Անտիոքի Բախտի պատկերատիպով:

Այս դրամին վրայի յատկանշական կէտերը թագաւորին գլխուն ետեւի Ա կրկնանշանն ու խոյրին չորս առամներն են (փոխան հինգի): Նախապէս այս դրամը ցուցակագրուած էր իբրեւ թիւ 220, բայց չէր պատկերագրադարուած այս նիւթի վերաբերեալ մեր բանասիրութեան մէջ, ուր կրկնադրոշմներն ու կրկնանշանները մանրամասնութեամբ նկարագրուած էին: Նմանապէս, նոյն աշխատասիրութեան մէջ կայ այլ դրամ մը (պատկերագրադարուած, թիւ 228), որ ունի չորս առամներ սակայն տարրեր կրկնանշան մը<sup>13</sup>: Անտիոքի Բախտի պատկերատիպով պղնձեայ դրամներուն վրայ դրոշմուած Տիգրանի խոյրը գրեթէ միշտ պատկերուած է հինգ առամներով: Նաեւ գոյութիւն ունին չորս եւ

Հագուաղէպօրէն երեք ատամներով խոյրեր- ընթերցողը պէտք է որոնէ զանոնք Տիգրան Մեծի Յաղթանակի պատկերատիպով շատ փոքրածաւալ պղնձեայ դրամներուն վրայ<sup>14</sup>:

Նկարագրութիւն

Երես- Տիգրանի կիսանդրին դէպի աջ, գլխուն՝ մարգարտաշար չորս ժանիքներով Հայկական խոյրը որու ետին Ա կրկնանշանը դրոշմուած է:

Կռնակ- Անտիոք քաղաքին Բախար, աշտարակաձեւ թագը գլխուն, ժայռի մը վրայ նստած, թիւ 1ի նման: Սակայն յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախին՝ ΒΑΣΙΛΕΩΝ / ΤΙΓΡΑΝΟΥ:

Թիւ 7. 3.61դ - 18մմΦ-11Ժ.

## ՊՂԻՆԶ, ՉՈՐՄ ՔԱՂԿՈՍ, ԿՏՐՈՒԱԾ ԴՐԱՄ (ԹԻՒ 8)

Ընդհանրութիւններ

Հին ժամանակներ, պղնձեայ դրամները յաճախ կիսուած են տրամագիծի ուղղութեամբ, մանրուք դրամ Հայթայթելու առօրեայ առուտուրի համար:

Խնդրոյ առարկայ դրամը յայտնաբերուած է Տիգրան Մեծի 170 կտոր պղնձներու դրամագիւտի մը մէջէն: Դրամագիւտին մէջ ուրիշ կտրուած դրամ չկար: Ըստ բանիմաց տեղեկութեան, դրամագիւտը կատարուած է շուրջ 1981ին, Արեւմտեան Հայաստանի մէջ, Վան քաղաքէն 50-100 մղոն հարաւ արեւմուտք:

Տիգրան Մեծի այս դրամը Յաղթանակի պատկերով դրուագուած՝ ենթարկուած է փորձաքննութեան: Մասնագէտ քննիչը եզրակացուցած է, թէ «հարազատ դրամ մըն է, կտրուած հին ժամանակ, մանրուք դրամ շինելու համար»: Բնկորը մաքուր կտրուածք քառորդ մաս մըն է, խոյրին ետին եւ կ'երկարի ծմ դէպի կեղրունը: Կտրուածքի կանաչախաւ տեսքը (patina) կը թելադրէ, թէ բնկորը կտրուած է հին ժամանակ թեղեւ մանրուք դրամ շինելու նպատակով<sup>15</sup>:

Հոս նաեւ պէտք է յիշուի, թէ բացարձակ փաստ գոյութիւն չունի, թէ անհրաժեշտութիւն կար պղնձեայ դրամ կտրելու մանրուք դրամ շինելու նպատակով, քանի որ Տիգրան Մեծ ունէր փոքրածաւալ քաղկոսներու զանազան տիպեր, որոնք ծանրութեամբ ու մեծութեամբ համապատասխան կրնային ըլլալ կտրուած բնկորին:

Նկարագրութիւն

Երես- Տիգրանի կիսանդրին դէպի աջ, գլխուն՝ Հայկական խոյրը: Խոյրի ետին, վերի ձախ անկիւնը, 1/4ը ուղիղ կտրուած ու վերցուած է:

Կռնակ- Յաղթանակը կը քայլ դէպի ձախ, նշմարելի միայն՝ Հագուատին վարի մասը եւ մասնակի ուղղահայեաց խորագրութիւնը:

Թիւ 8. 6.2Ադ - 20մմΦ-1Ժ, 2մմ հաստութիւն<sup>16</sup>



Տախտակ 1. Տիգրան Մեծի Բանի մբ անտիպ դրամները



5X



♀



6




7



9



1



8X

Տախտակ 2. Տիգրան I-ի ժամանակի մեծ և փոքր դրամները

ՊՂԻՆՉ ՄԷԿ ՔԱՂԿՈՍ, ՅԱՂԹԱՆԱԿԸ ԲՈՆԱՄ՝ **Ա** (ԹԻԻ 9, ՏԱՌ 7-)  
Ընդհանրութիւններ

Տիգրանի այս նորայայտ պղինձին վրայի յատկանշական կէտերը չեն նշմարուած նման պատկերատիպով դրամներուն վրայ: Այս դրամին ետեւի Յաղթանակը մեզի կը յիշեցնէ Պտուկեանի Արտաշէսեան Հարստութեան Դրամները գիրքի 120 թիւը եւ մեր Armenian Coins And Their Values գիրքի 86, 87, 89, 90 թիւերը:

Դրամին երեսին վրայ, խոյրը ունի հինգ ատամներ՝ փոխան չորս սրածայր գազաթներու, որոնք պատկերուած են այսպիսի դրամներու մեծամասնութեանց վրայ: Խոյրին վրայ առկայ է ութ մարգարիտներով աստղ մը: Ուշադրութեան արժանի է, որ Տիգրանի դրամներուն վրայի աստղը առհասարակ ունի ճառագայթներ, մինչդեռ հոս կան ութը հատ մարգարիտներ, որոնք կը շրջապատեն կեղերոնական մարգարիտ մը:

Դրամի կռնակին, Յաղթանակը կը յառաջանայ դէպի ձախ: Յաղթանակին աջ թեւը դուրս երկարած է. եթէ բռնած է ծաղկեպսակ մը՝ այդ չ'երեւիր. ձախը երկարած է դէպի դուրս եւ բռնած առարկայ մը, որ ունի «Ա» տառին ձեւը: Սովորաբար Յաղթանակը իր կռնակին վրայ ունի դէպի վար երկարած թեւ մը:

Նկար Դ-ի դրամին վրայի Յաղթանակը նմանապէս մէկ քաղկոսնոց պղինձ մըն է, ունի չորս սրածայր գազաթով խոյր մը եւ դէպի վար ուղղուած թեւ մը: Նկարագրութիւն

Երես. Տիգրան Մեծի կիսանդրին դէպի աջ, գլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով հայկական խոյրը թիւ 1ի նման: Խոյրը զարդարուած է աստղով մը, ուր ութ կլոր մարգարիտներ կը շրջապատեն կեղերոնի կլոր մարգարիտը: Աստղի ձախին առկայ են երկու մեծ եւ երկու փոքր կէտեր, որոնք քառանկուն կը կազմեն: Ձախին՝ դաշտին մէջ դրոշմուած է աչքառու «Ա» տառը:

Կռնակ. Յաղթանակը ձախ կը յառաջանայ, աջ թեւը երկարած է դէպի դուրս իսկ դէպի դուրս երկարած ձախ թեւը բռնած է **Α** տառին նմանոց առարկայ մը: Յունատառ խորագրութիւնը աջին դէպի վար՝ [B]ΑΣΙΑΕΩ[Σ], ձախին դէպի վար՝ ΤΙΓΡΑΝ[ΟΥ]:

Թիւ 9. 3.17գ - 15մմφ - 10ժ առանցքային ուղղութիւն  
Տառ Դ. 2.93գ,

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- <sup>1</sup> Ջարեհ Պտուկեան, Արտաշէսեան Հարստութեան Դրամները, Վիեննա, 1983:
- <sup>2</sup> Y. E. Nersessian, Armenian Coins And Their Values, Լոս Անճելոս, 1995:
- <sup>3</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1955, էջ 193; Հայկական Սովետական Հանրագիտարան, Հայկական ՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիա, հատոր 2, Երեւան, 1976, էջ 139:
- <sup>4</sup> Տիգրան Ա., Բ. եւ Գ. արքաներու դրամներուն վերագրումին համար տես՝ Ե. Թ. Ներսէսեան, "An Unpublished Coin of Tigranes I," Հայ Դրամագիտական Հանդէս, Ա.

- չրջան, Հատոր XVI (Յունիս 1901), թիւ 2, էջ 13-21; նոյն նաեւ՝ *Armenian Numismatic Studies*, Լոս Անճելոս, 2000, էջ 1-11; նաեւ՝ «Մեծն Տիգրան Եւ Կրտսեր Տիգրանի Դրամներուն Առեղծուածը», *Բազմալէզ, Հատոր ՃԾԸ*, 2000, թիւ 1-4, էջ 198-230; C. Foss, "The Coinage of Tigranes the Great: Problems, Suggestions and a New Find," *Numismatic Chronicle*, vol. CXLVI, 1986, էջ 19-66; Ernest Babelon, *Les Rois de Syrie, d'Arménie et de Commagene*, Փարիզ, 1890, էջ 216, թիւ 27 եւ 28, տարտակ XXIX, թիւ 18 եւ 19; Արտաշէս Բ. եւ Գ. արքաներու դրամներուն վերագրումին Համար տե՛ս Ե. Թ. Ներսէսեան, «Արտաշէս Բ-ի Դրամները», *Բազմալէզ, Հատոր ՃԿԱ*, 2003, թիւ 1-4, էջ 348-372; Լ. Ա. Սարեան, «Արտաշէս III-ին վերագրուող նոր Արծաթէ Դրամ», *Պատմաանաիրական Հանդէս*, 1998, թիւ 3 (149), էջ 155-162:
- <sup>5</sup> Classical Numismatic Group, *Auction 57: Mail Bid Sale, Լինքսթրը, Փասատինա, 4 Ապրիլ 2001*, էջ 81, թիւ 865.
- <sup>6</sup> Պտուկեան, *Արտաշէսեան 293*; Ներսէսեան, *Armenian Coins* 36; Ե. Ներսէսեան, "Silver Coins of Tigranes II of Armenia," A69-P8a, *Հայ Դրամագիտական Հանդէս, Ա շրջան, Հտ. XXVI*, (Դեկտ. 2000), թիւ 3-4, էջ 43-108, տարտակ 1-10, տե՛ս յատկապէս՝ էջ 70:
- <sup>7</sup> Paul Z. Bedoukian, "Some Unpublished Coins of the Artaxiads of Armenia," *Revue des Etudes Arméniennes*, նոր շրջան, Հատոր XVII, էջ 279-287, թիւ 13; նոյն նաեւ՝ *Selected Studies II*, Լոս Անճելոս, 2003, էջ 70-77; C. Foss "The Coinage of Tigranes the Great: Problems, Suggestions and a New Find," *Numismatic Chronicle*, Հատոր CXLVI (1986), էջ 19-66, տարտակ 5-7, մասնաւորաբար տարտակ 7, տառ j:
- <sup>8</sup> Joel L. Malter & Co., Inc., *Auction XXIII, Էնսիօ, Քայիֆորնիա, 23-25 Սեպտեմբեր 1982*, էջ 4 եւ 28, թիւ 25: Ուշադրութեան արժանի պէտք է ըլլայ, որ Տառ Բ դրամին կռնակը կրկնադրոշմուած է Զեւսի դիմանկարը պատկերող հին դրամի մը վրայ: Կրկնադրոշմը ակնհերեւ կ'ըլլայ եթէ նկարը ալ շրջուի երեսուն աստիճան:
- <sup>9</sup> Պտուկեան, *Արտաշէսեան*, էջ 90; Ներսէսեան, *Armenian Coins*, էջ 43; նոյն՝ *Silver Coins*, a41-pla.
- <sup>10</sup> Nercessian, *Armenian Coins*, էջ 43; Spink & Son Ltd., *Coin Auction 102: Ancient, Foreign and English Coins and Commemorative Medals*, (2 Մարտ 1904, *Տօնապատեանի Հաւարածոյ*), թիւ 174:
- <sup>11</sup> C. J. Milne, *Greek and Roman Coins and the Study of History*, 1938, *վերատպուած Երեւոյի*, 1977, էջ 75-80; C. J. Howgego, *Greek Imperial Countermarks*, Լոնտօն, 1985:
- <sup>12</sup> C. J. Howgego, էջ 164-170, թիւ 320-344:
- <sup>13</sup> Ե. Թ. Ներսէսեան եւ Լ. Ա. Սարեան, "Overstruck and Countermarked Coins of the Artaxiad Dynasty of Armenia," *Հայ Դրամագիտական Հանդէս, Ա շրջան, Հատոր XXII (Յունիս-Սեպտեմբեր 1996)*, թիւ 2-3, էջ 23-62, տարտակ 1-VI; *Հայ Դրամագիտական Ուսումնասիրութիւններ*, Լոս Անճելոս, 2000, էջ 150-206, տարտակ 37-46, թիւ 220 եւ 228:
- <sup>14</sup> Nercessian, *Armenian Coins*, թիւ 87 (չորս ատամներ), թիւ 90 (երեք գագաթներ):
- <sup>15</sup> Լ. Ա. Սարեան, "An Unusual Cut Bronze Coin of Tigranes the Great of Armenia," *Centinel*, Հատոր 48 (Գարուն 2000), թիւ 1, էջ 15-19; *Revue des Etudes Arméniennes*, նոր շրջան, Հատոր 28 (2001-2002), էջ 495-503:
- <sup>16</sup> Պտուկեան, *Արտաշէսեան*, տրպ 114-120; Ներսէսեան, *Armenian Coins*, տրպ 77-91:

SOME UNPUBLISHED COINS OF TIGRANES THE GREAT  
OF ARMENIA  
(Summary)

Y. T. NERCESSIAN

Since the publication of the *Coinage of the Artaxiad of Armenia, and Armenian Coins and Their Values*, numerous new coins which deserve our attention have been discovered.

Nos. 1, 2. The letters engraved on the reverse of the Tigranes tetradrachms are behind Tyche's head, the letter  $\phi$  above  $\nu$  resembles an anchor and the letters  $\Delta$  and  $M$  are in the right field below the palm-branch, H.

Nos. 3, 4. These small silver fractional drachms of Tigranes with quadriga design were described in the past but not properly. The reason for this was their being struck off-center. They remind us of the copper coin of Tigranes with quadriga design (letter B).

Nos. 5, 6 are copper coins of Tigranes with Heracles (Vahagn) design. The interesting feature of No. 5 is that the king's face is unshaven. On No.6 there is a countermark behind the king's head, formed of four circles, each containing a pellet. They form a diamond-shaped pattern. Also, there is an eagle in a rectangular punch; the eagle's right wing coincides with the left pellet.

No. 7 is a copper coin of Tigranes with Tyche reverse design. The interesting feature of this coin is the countermark A behind the king's head, and the Armenian tiara has four peaks.

No. 8 is a copper coin of Tigranes II, cut diametrically to make change for transactions. The fragment cleanly removed is a one-fourth segment, from behind the tiara, and extending 8mm. inside. The appearance of the patina also suggests that the fragment was removed in ancient times.

No. 9 is a copper coin of Tigranes with Nike walking left. The right arm is outstretched, and the outstretched left arm holds an object resembling letter A.